

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Պատրագրողացիք դիմում են ուղղակի
Խաբաթ. Редакция „Маяк“

ՄԱՅԿ

Խմբագրատունը բաց է առանձնապէս 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Գոյութեան համար կռիւր:—Ներքին տե-
սութիւնը, Նամակ վերին-Ազգութիւնը: Նամակ
Մեծ-Ղարաբլիսայից: Նամակ Նոր-Նախիջ-
նից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսու-
թիւն: Անգլիա. Ֆրանսիա. Ամերիկա. Նամակ
Թիւրքիայից:—Խառն լուրեր:—Մշակիչ հե-
ռագիրներ:—Յայտարարութիւններ:

ԳՈՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿՈՒՒՆԸ

Երկու համար սրանից առաջ
վերջացրինք Մէլերգադէի կազմ-
ված յօդուածի տպագրութիւնը
դոյութեան համար կուսի
մասին:

Այդ յօդուածը թէև շատերին
գուցէ ծանր կերևայ, բայց այնու
ամենայնիս նա ամեն կողմից ու-
շադրութեան արժանի է և այժմ,
երբ նրա տպագրութիւնը վերջա-
ցել է, մենք հրաւիրում ենք մեր
ընթերցողներին ուշադրութեամբ
կարդալ այդ յօդուածը սկզբից
մինչև վերջը:

Այդ յօդուածը մեծ նշանակու-
թիւն ունի Թիւրքիայի հայերի
քաղաքական և հասարակական
դրութեան վերաբերութեամբ:

Մարդկային ցեղերը իրանց գո-
յութեան համար կուսի մէջ հե-
տևում են նոյն օրէնքներին, որին
հետևում են ընտանեան այլ կեն-
դանիները և բոյսերը: Օրեղ
տեսակները յաղթող են հանդի-
սանում թոյլերի վրա, հետզհետե
յետ են մղում նրանց իրանց նախ-
նական դրբից և վերջապէս կլա-
նում կամ կատարելապէս ոչնչաց-
նում են թոյլերին:

Եթէ մենք ասենք առհասա-
րակ որ փոքր ազգութիւնները և
ցեղերը պէտք է կուս գնան մեծ
ցեղերի և ազգութիւնների մէջ,
—Թէօրիսի մէջ այդ գաղափարը
գուցէ ուղիղ կը լինի, բայց գործ-
նականութեան մէջ այդ միտքը
շատ անգամ սխալ է յայտնվում:

Այդ միտքը սխալ է, ասում
ենք, գործնականութեան մէջ այն
պատճառով, որ մեծ ցեղ, կամ
մեծ ազգ չէ նշանակում զօրեղ:
Հատ անգամ ազգութիւնը, կամ
փոքր ցեղը իր գոյութեան համար
կուսելով, վերջ ի վերջոյ աւելի
զօրեղ է հանդիսանում, քան թէ

մեծ ցեղը, մեծ ազգութիւնը,
որովհետև ոյժը միմիայն ընդար-
ձակութեան մէջ չէ բովանդակ-
վում, այլ գլխաւորապէս մտաւոր
կարողութեան մէջ:

Մենք բոլորովին համաձայն ենք
Բօկլի այն մտքի հետ որ բարո-
յականութիւնը, համեմատելով
մտաւոր ոյժի հետ, երկրորդական
գեր է խաղում մարդկութեան
առաջադիմութեան մէջ և ցեղերի
իրանց գոյութեան համար կուսի
մէջ: Այո՛, շատ զիպուածների
մէջ յաղթող են հանդիսանում
ամենաանբարոյական ազգերը:

Առհասարակ ոյժ ասելով, բացի
մտաւոր ոյժից, պէտք է հասկա-
նալ և ֆիզիկական ոյժ:

Սկզբից զննութեան վրեղ
ազգերը միշտ յաղթող են հան-
դիսանում թոյլ աշխատասէր,
խաղաղ, հեղաբարոյ, անգէն ազ-
գերից: Բայց եթէ զննութեան
ազգը ծայրայեղութեան մէջ է
ընկնում, արհամարհելով մտաւոր
ոյժի ձեռք բերելը հետևում է
միմիայն աշխարհակալութիւննե-
րին, նա ժամանակով թուլանում
է և հետզհետե սկսում է ենթար-
կվել մտաւոր ոյժ ունեցող թոյլ
ազգութեանը: Բայց այդ չէ նը-
շանակում որ մի մտաւոր կերպով
զարգացած ազգ, որ ցանկանում է
իր գոյութեան համար կուսել իր
բոլոր յոյսը պէտք է դնի միմիայն
իր մտաւոր ոյժի վրա.... Ունելով
իր դիմաց ֆիզիկապէս զարգա-
ցած, զօրեղ զննութեան մի ա-
խոյան, թոյլ բայց մտաւորա-
պէս զարգացած ազգութիւնը
պէտք է աշխատի իր ձեռքը գը-
ցել և ֆիզիկական ոյժը, զենքը,
որպէս զի կարողանայ պաշտպա-
նել իր անձը զօրեղի կօպիտ, բռնի
յարձակումներից: Մտաւոր ոյժի
շնորհով կարելի է յաղթել միայն
հետզհետե, անընդհատ, տոկուն
աշխատանքով, բայց մի յայտնի
ժամանակում բռնի ոյժին դիմա-
դրել մտաւոր ոյժը անհնարին է:

Թիւրքիայի հայերը, այո, պէտք
է ամեն միջոցներով աշխատեն
զարգացնել իրանց ուսումնա-
րանները, լրագրութիւնը, ընկե-
րութիւնները, լայնացնել իրանց

մտաւոր շըջանք, լուսաւորութիւն
տարածեն ոչ թէ միայն իրանց
հայրենակիցների մէջ, բայց և
իրանց շըջապատող վայրենի ցե-
ղերի մէջ,—բայց այդ բոլորը բա-
ւական չէ մի ազգին իր գոյու-
թեան համար կուսի մէջ յաղթող
հանդիսանալու համար.... Հար-
կաւոր է և ֆիզիկական ոյժ ձեռք
բերել հարկաւոր է ընտելանալ
ոչ թէ ուրիշների վրա արշաւել,
ոչ թէ ապստամբութիւններ անել,
բայց զենքը ձեռին պաշտպանել
ուրիշների բռնի յարձակումների
դէմ:

Այն ազգութիւնը որ բացի
շարունակ առաջադէմ, ժամանակի
պահանջներին յարմարվող մտաւոր
ոյժից կունենայ մի յայտնի չա-
փով և ֆիզիկական ոյժ, զննու-
րական ոգով էլ զարգացած կը
լինի,—այդ տեսակ ազգութիւնը
ուրիշ ցեղերի հետ իր գոյութեան
համար կուսի մէջ միշտ յաղթող
կը հանդիսանայ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Վ. ԱԳՈՒՂՈՅՑ

2 նոյեմբերի

Մի քանի շաբաթ առաջ այստեղի նշանաւոր
վաճառականներից մէկի, պ. Բ. Տէր Միքե-
լեանցի տանը ընթրիք կար պատրաստված,
հրաւիրված էին երեսունի չափ անձեր: Ընթրի-
քը բաւական ճոխ էր, և եթէ մի եւրօպացի
յաւիկարձ ներս մտնելու լինէր և տեսնէր փա-
ռաւոր սեղանը, բաւական լաւ գաղափար կը
կազմէր հայ գիւղացու բաղաւորութեան մա-
սին:

Խօսքս դրա վրա չէ, փառաւոր սեղաններ
շատ տեղերում լինում են, բայց զինիս ամեն
խմողի վրա մի և նոյն ազդեցութիւնը չէ գոր-
ծում: Հատ մարդերի մէջ նա գրգռում է վայ-
րենի զգացմունքներ, շատերը խմելով ազնուա-
նում են, ոգևորվում են և սկսում են գեղեցիկ
ճառեր կարդալ, իսկ շատերը անասնանում են....
Բայց ինչ է լինում ազուլեցին խմելու ժամա-
նակ,—նա գառնում է ազգ ասել:

Անա այդ յատկութիւնից օգուտ քաղելով, պ.
Յ. Մէլքե-Յակոբեանը սեղանի վրա մտածեց
մի բան սարքել:

Տաք-տաք խմում էին և երգում էին երգեր,
պարներ վեր կացաւ և մի աստ առաջարկեց
Յայտնի է, թէ ինչ աստ կառավարիչը երբ
խօսքը հայրենիքի թշուառութեան վրա էր. նա
յիշեց մեր տաճկաստանից հայ եղբայրներին:
Յետոյ նա խօսեց փոքր ինչ երկար, բայց բաւա-
կան խելացի ճառ: Նա իր ճառի մէջ առաջար-
կում էր մի ամբողջ պրօէկտ: Ազուլեան չիմ-
անկ մի ընկերութիւն բարեգործական նպատա-
կով: Ընկերութեան նպատակը պէտք է լինէր
երկու բան. առաջին, չբարձր և միջոց չունե-
ցող մանուկներից վարժապետացու պատրաս-

տել, երկրորդ, տպագրել զարոցների համար
զատագրքեր, և այնպիսի գրքեր, ժողովուրդի
մէջ ընթերցանութիւն տարածելու համար: Ընթ-
րիքից յետոյ նա աւելի պարզ կերպով բացատ-
րեց իր միտքը, ցոյց տուեց մի այսպիսի ըն-
կերութեան կարելութիւնը, նրա օգտաւէտու-
թիւնը և ապագան: Հանդիսականները մեծ ու-
րախութեամբ համակրեցին պարոնի առաջար-
կութեանը և ինչդրեցին մի կանոնադրութիւն
գրել: Նա յայտնեց, թէ և ինքը ունի իր գըլ-
խում այդ ընկերութեան ձևակերպութեան մասին
մի ծրագիր, բայց կը ցանկանար, որ իրան երկու
օգնական տրուէր կանոնադրութիւնը կազմելու
համար: Օգնականներ որոյվեցան պ. պ. Մ.
Աթաբէկեան և զօքտօր Յ. Գերշահեան, մի ե-
րիտասարդ բժիշկ, որ նոր է դարձել փարի-
զից:

Մենք մեծ անհամբերութեամբ սպասում էինք
կանոնադրութեան պատրաստվելուն, երբ մեր
պատուելի մէլքե, Մ. Յ. Կոստանդինուպոլիս
լուր տուեց, թէ օրիորդաց զարոցի զահիճում
ժողով կայ: Ժողովը նշանակված էր երեք ժա-
մին կէսօրից յետոյ, չորսից փոքր անցած, հրա-
ւիրեալները պատրաստ էին: Այն օր պէտք է
քննվէր ընկերութեան կանոնադրութիւնը, որ
արդէն պատրաստ էր: Պ. Մէլքե-Յակոբեանը
կարդաց, մի և նոյն ժամանակ բացատրելով և
պաշտպանելով իւրաքանչիւր յօդուածները: Կա-
նոնադրութիւնը ընդունվեցաւ մասնաւոր փոփո-
խութեամբ: Եւ մի և նոյն ժողովում 36 հոգի հիմ-
նադիր անգամ գրվեցան այս ընկերութեան, մի
մասը կանայք և մի մասը տղամարդիկ: Սոս-
րագրութիւնը զեռ շարունակվում է, և երբ հիմ-
նադիր անդամների թիւը կը հասնի 50-ի, այ-
նուհետե կանոնադրութիւնը կուղարկվի բարձր
կառավարութեան հաստատելու համար:

Բայց պ. Մէլքե-Յակոբեանը նոյն ժողովում
յայտնեց, թէ ընկերութեան դրութիւնը նախ
քան բարձր կառավարութեան ներկայացնելը,
ինքն մտադիր է ուղարկել «Մշակի» խմբագրա-
տունը լրագրութեան կարծիքը նրա մասին լը-
սելու համար, որպէս զի գործը աւելի հիմա-
ւոր և կատարեալ կերպով սկսվի: Այդ առա-
ջարկութիւնը նոյնպէս ընդունվեցաւ ժողովից:

Բոլոր սրտով ողջունելով իմ հայրենակիցների
այդ նոր ձեռնարկութիւնը, ես պատիւ եմ համա-
րում ինձ հրապարակաբար յայտնել, եթէ ազու-
լեցիք մինչև այսօր կատարել են շատ հասարա-
կաց օգուտ բերող գործեր, այդ վերջինը ամենի
պատկը կը լինի: Գիւրք և ուսուցիչ շըջ-
րանք մեր դարու ամենամեծ գործիչներն են,
որոնց կարօտ ենք մենք:

Ես նպատակ չունեմ այժմ գրել այդ ընկերու-
թեան կազմակերպութեան մանրամասնութիւն-
ները, ի նկատի ունելով, որ գուցէ շուտով կը
տպագրվի նրա կանոնադրութիւնը,—միայն կա-
սեմ, որ առաջին անգամ մեզանում մի բարե-
գործական ընկերութիւն կազմվում է այդ և կին
մարդերից, դա շատ լաւ նշան է: Մեր կանայ-
քը այն աստիճան ոգևորվեցաւ կպան այդ
գործին, որ համեստութիւնը արգելում է ինձ
յայտնել մի քանի աղիւս տիկիների անուններ
որ իրանց վերաւորված համարեցին, թէ ինչու
ստորագրութեան թերթը չը տարան նրանց մօտ,
որ նրանք ես անգամ գրվէին:

Այդ ընկերութիւնը ունի ընդհանուր նպա-
տակ, և իր շըջանքը ընդարձակելով, պիտի տա-
րածվի: Ռուսաստանի ամեն հայաբնակ քաղաք-
չիւրում, ամեն տեղ առանձին ճիւղեր հիմնելով:
Եւ ոչ ոքի այնքան հնարաւոր չէ, իմ կարծիքով,
իրադրուել մի այսպիսի ընկերութիւն, որքան
ազուլեցուն, որովհետե նրա մէջ եռանդ կայ
բացի դրանից, ազուլեցի վաճառականը ամեն
տեղ տարածված է, և կարող է շատ հեշտու-
թեամբ նոր և նոր անդամներ գտնել, մանաւանդ
ընկերութեան անգամ լինելու պայմանները
խիստ թեթեւ են:

Օրինակ առնելով Բագուի «Մարդասիրական»
ընկերութիւնը (թէև նա մի նշանաւոր գործ չէ
գործել) ես համոզված եմ, որ փոքր քաղաք-
ներում, փոքր հասարակութիւնների մէջ աւելի

հետևանքներն են կազմակերպում և յառաջ գնում ընկերությունները, քան մի այնպիսի մեծ հայ հասարակություն մէջ, որպէս Ռիֆիլին է: Ազգական փաճառականները դեռ շատ առաջ Ռիֆիլին սուտ մտադիր էին կազմել մի ազգայական ընկերություն, և մինչև այսօր այն ժամանակից հաւաքված մի գումար գումարվում է բանկում: Մտկայական գումարի ազդեցիկ փաճառականները ազա Հ. Արափանեանցի թերադրութեամբ կազմեցին մի գումար, որ պիտի հիմք դնէր մի ընկերության աղքատներին օգնելու համար, այժմ նոյն գումարը մի քանի հազարի է հասել: Այս կարող եմ շատ օրինակներ բերել, որոնցից պարզ երևում է, թէ ազգայնիքը դուրի չեն ընկերական ոգուց, և ոչ խնայող, երբ մի գործ վերաբերում էր հասարակաց օգտին:

Եւ այս պատճառով ես պիտի Մէլիք-Յակոբեանին սխալված չեմ համարում իր ձեռնարկութեան մէջ, և ցանկանում եմ հրահանել իր համախոհներին կատարեալ յայտնութիւն:

Մի ազգայնի

ՆԱՄԱԿ ՄԵՇ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ

Յիշեալ գիրքը բաղկացած է մօտաւորապէս 300 տնից, և դասադասւում է միւս գիրքերից իր ստույգարար օգով, գեղեցիկ մարգարէութիւններով և արծաթափայլ փոսիկներով, որոնք հոսում են անտառական ձորերի մէջ: Ժողովուրդը առհասարակ պարագայում է հողագործութեամբ և վաճառականութեամբ: Վաղուց ունեն մի ծխական զպրոց, որտեղ սովորում են 80-ի չափ գիւղական հայ մանուկներ հետեւել առարկաները: Ուսումը լեզու, հայոց լեզու, թուրքական, ընդհանուր պատմութիւն, աշխարհագրութիւն, արեւելական պատմութիւն, ազգային երգեցողութիւն, հայոց պատմութիւն, բնագիտութիւն, հայոց և ուսումը վայելագոյնութիւն: Սակայն պէտք է ճշմարտացի ասած որ առհասարակ այսպիսի մի ուսումնասիր ժողովուրդը շատ քիչ կը ծարվի թէ քաղաքներում և թէ գիւղերում:

Այս գիւղի մէջ անգրագետ մարդ շատ հազար կարող են գտնել, այս ղէպովում ի հարկէ պարտական են նրանք ուսումնասիրան, որ իր գոյութեան օրից մինչև այսօր միշտ և անխափան ունեցել է աշակերտներ և բարեխիղճ ուսուցիչներ, որոնք իրանց կարողութեան չափով միշտ աշխատել են ժողովրդի դաստիարակութեան համար: Թէ և մինչև այսօր ուսումնասիրանը չունէր իր համար սեփական տուն, բայց այժմ հասարակութիւնը գիւղի կենտրոնում կանգնացրել է վեց սենյակից բաղկացած մի փառաւոր ուսումնասիրան իր բոլոր յարմարութիւններով: Գիւղի գլխավոր փողոցները արդէն խճայտակ են արել և աշխատում են միշտ մաքուր պահել: Գիւղը զանազան անմաքրութիւններից: Վերջապէս համարձակ կարելի է ասել, որ այս գիւղը շատ հանգամանքներում բարձր է մի քանի քաղաքներից: Գլխավորապէս այս գիւղը իր բոլոր բարեկարգութեամբ պարտական է Ա. Միրզա-յանցին, որ կատարում էր տանտնտիրով օգնականի պաշտօնը և որ համարեա իր տնական հողերը մուսացած բոլոր ջանքը գործ էր դնում գիւղի բարեկարգութեան և մանաւանդ ուսումնասիրանի յառաջադիմութեան վրա: Պ. Միրզայանի շնորհիւ ուսումնասիրանը զանազան միջոցներով շատ օգուտներ է ստացել: Բայց այս վերջին ընտրութեան ժամանակ, յիշեալ Միրզայանը հրաժարվեց պաշտօնից և նրա տեղ տարաբաղադարար յաջորդեց պ. Ս. Վերիկեանց, որի շնորհիւ գիւղը օրըստօրէ գրկելում է իր բոլոր նախանձելի բարեկարգութիւններից և նրանց տեղ թաղաւորում են կուսակցութիւններ, աւազակութիւններ և զանազան տեսակ անկարգութիւններ: Գլխավոր գարմանքն այս է, որ պ. Վերիկեանցը իր պաշտօնի մէջ մտած բոլորից միշտ աշխատում է ուսումնասիրանը, իբրև փաստակար տուն քանդել և հիմն ի վեր տապալել: Ամեն օր պէ աշխատում է ղէպի ուսումնասիրան ունեցած ժողովրդի սէրը և համակրութիւնը պաղցնել:

Ենթադրենք թէ ուսումնասիրանը այդ պարունին ոչ մի օգուտ չէ տալիս, բայց չէ որ վնաս էլ չէ տալիս, ուրեմն էլ ինչու է այդքան թշնամութիւն անում ուսումնասիրանի հետ, ինչու է աշխատում զոռնեցնել հողաբարձունքին և ուսուցիչներին, ինչու է սիրում միշտ փակել այդ սուրբ տաճարի դռները և վերջապէս ինչ է պատճառը, որ պ. Վերիկեանցը հողով չարարվում է և համոզում է ժողովրդին, որ ուսումնասիրանի զանազան տեսակ եկամուտներն էլ ցա-

մաքեն, և մանաւանդ պ. Վերիկեանցը առանց խղճահարելու և ամաչելու ուսումնասիրանի անուշիկ հասարակութիւնից ստացած նուէրները սրտով պահում յետ է առնում ուսումնասիրանից և կրկին հասարակութեան զանձանակն է գցում:

Գործի պարզ դրութիւնից յայտնի երևում է, որ պ. Վերիկեանցը մի լաւ մատաղ էլ կանի, եթէ մէկը տապալը ձեռքին դուրս գար և ուսումնասիրանի հիմքը քարուքանդ անէր:

Երբեք, երբեք չեմ կարծում, թէ աշխարհի որ և իցէ ըսելն ու պոռնակում այսպիսի մի ուսումնասիրան արարած գումար: Զարմանալի բան է, որ սա, մի քանի հազարապահներ և յիմարներ շնորհիւ Վարաքիլիսայի պէս հասարակութեան վրա տանուէր է կարգված: Ուրեմն, երանի քեզ Վարաքիլիսայ, որ Վերիկեանցի նման առաջնորդ ունեն, միամիտ կաց, դու չուտով կը մտենաս քո նպատակին:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԼԱՆԻՑ

3 նոյեմբերի

Մի տարու չափ կը լինի, որ Նոր-Նախիջևանը ստացել է մի ներքին խմորում, որոյ հետեւանքն փորձառու աշէրն շատ ուրախալի երևոյթներ կը խոստանայ: Նոր-Նախիջևանը ստացել է (ղբեկն թէ ներսէն չը գիտեմ) մի դարի. նրա ընտելիքը իրանց դարաւոր, բարոյական ներհնէն զարթել են, հետաքրքրիչ աշտով նայել են իրանց չորս կողմը, տեսել են որ՝ դրացի ժողովուրդներէն շատ յետ են մնացել, ուստի բոլոր ուժերը միացուցած շտապում են հասնել նրանց ետեւէն: Նախիջևանի դուռ մասն հետգնեմ ստանում է ձայնաւորների կողմէ բաղմամտակ առաջարկութիւններ, որոյմէ ամեն միւր ձգտում է ղէպի բարեկաւութիւն, փողոցների հիմնարկութիւն, փողոցները և հրապարակները քարայրաւոր արձանել, քաղաքի լուսաւորութեան վրա հողաւ, քաղաքը ծառաւորութիւն, և այլն, և այլն, և այլն: Եւ այս ցանկութիւնը առօրեայ խօսք ու զրոյց է ոչ թէ քանի՜ մի անհատների, այլ ամբողջ ժողովրդի բաղմութեան: Այս անհերք ապացոյց է, որ Նոր-Նախիջևանը զարթել է իր բարոյական ներհնէն:

Երբեք առում են թէ՛ առաջները մեր քաղաքը այդպէս չէր. առաջվայ ժամանակները հասարակաց գործի վրա ոչ ոք հոգ չէր տանում, եթէ այս և այն մարդը հողար ևս ժողովրդի բաղմութեան շնորհակալութիւն և խրախուսանք չէր ստանում:

Ես չեմ ասում, որ եթէ մի օտար ճանապարհորդ գայ մեր քաղաքի մէջ շատ բարեկարգութեամբ կը գտնէ. մ. բայց եթէ նաոր ունենայ այդ օտարը մեր սրտերու մէջ մանկու՝ նա այնտեղ շատ բարի բաներու ցանկութիւն կը գտնէ, Յայտնի բան է, որ մարդու մէջ նախ պիտի ծագի ցանկութիւնը, որ այնուհետեւ հետաւորար նրա կատարումը գայ: Այդ բնական օրէնք է:

Շատ ժամանակ չի անցնիլ, որ Նոր-Նախիջևանը կունենայ քաղաքական պարտեզ, բայց շատ գեղեցիկ և օգտակար, առանց այն զիշերային սա թ ու ու ա լ ի ա ն ե ռ ու ն, որոյմէ կը ստուգայ հայի բնածին ամօթխածութիւնը և պարկեշտութիւնը: Մեր ապագայ քաղաքային պարտեզը լինելով լուսաւորիչ մայր-եկեղեցու արթուն հակողութեան տակ, առաջվան պատասխանատու է, որ նրա մէջ ոչ չապաւորվեն, ոչ բարուց ապականութիւն, որոյմով հարուստ են ուրիշ քաղաքների քաղաքական պարտեզները: Այս մասին նախիջևանցիք երախտապարտ պիտի լինին տեղոյս հայ երիտասարդ ու թ ի ա ն:

Շատ ժամանակ չի անցնիլ, որ Նախիջևանը կունենայ աղքատիկ թաղեր, որ բնիկ վրայէն կը սովորացնէ ժողովրդին սիրել և ընդօրինակել վէճ մարդոց առաքելութիւնը և խուսափել չարութիւն և արհեստներու մղութիւնէն: Ազգային թաղերուն զարկ և կեանք տուողն է Նախիջևանի հայ երիտասարդ ու թ ի ա ն:

Շատ ժամանակ չի անցնիլ, որ Նախիջևանը կունենայ ժողովրդական տարբերագործութիւն, բայց մէկ ջով, թերեւ առաւել լաւ և օրինակելի պայմաններով, քան թէ այլ պայմանի ձեռնարկը ուրիշ քաղաքներում մէջ: Որ հայը չը գիտէ, որ խմբագրիչը մեր մէջ ստիպուած է հազար և մէկ արգելքների հետ պատերազմելու, որոց գլխավորն է՝ հայի անտարբերութիւնը ղէպի հայի գործ և հայի խնայողութիւնը ղէպի

աղաղին զոն: Շատ լաւ իմանալով այդ բանը, տեղին երիտասարդութիւնը, ինչպէս կը լսենք, պատրաստութիւն յատնել է ազատելու խմբագրչին ներթականի հոգսէն, ապի բոլոր ծախքն իր վրա առնել և թոյլ չը տալ որ նա իր թանկագին ժամանակը կորցնէ մեկնամաների չեմքը մաշելով: Այս աղնիւ ինիցիալիւն ևս կը պատկանի Նախիջևանի հայ երիտասարդութեան:

Շատ ժամանակ չի անցնիլ, որ Նախիջևանը կունենայ տպարան, որոյ գլխավոր գործունէութիւնը զոհված պիտի լինի հայոց բարոյական պիտոյքին: Այս տեղ և մեր հայ երիտասարդ ու թ ի ա ն ը ցոյց պիտի տայ իւրօրինակ գործակցութիւն, բայց թէ ինչպէս՝ այդ կը ցուցնէ ժամանակը:

Շատ ժամանակ չի անցնիլ, որ Նոր-Նախիջևանը կունենայ երկու կանանաւոր արուեստական դպրոցներ՝ միւր տղայոց և միւր աղջիկերանց համար, որոյ պրօգրամն թէ և շատ համեստ կը լինի, բայց նրա արդիւնաբերութիւնը քաղաքի համար շատ հարուստ: Յայտնի է, որ դալ տարի Նոր-Նախիջևանի հիմնարկութեան հարկւրամեակն է. Գաղաքային դուռայի մէջ խաղի ծագել է ըստ դիպաց այդ անցքին կանգնացնել քաղաքի մէջ երկու արձան, միւր ի յիշատակ կատարինէ կայսերուն և միւրը Յալսէի կաթողիկոսին: Երբոր հաշվեցին և տեսան, որ այդ բանի էացնելը 40,000 մանէթ պիտի նստի քաղաքին, Նախիջևանի հայ երիտասարդն էր էն քանիսը մտածեցին՝ առաւել լաւ չէր լինի արեօք, եթէ այդ երկու պատկանելի անձանց յիշատակները անմահացնելու համար, նրանց անուններին նուիրած երկու ամենագոյնաւոր և մեր կարիքին նպատակաւոր դպրոցներ շինել, որոնցմով միայն պիտի փրկվի մեր ազգը վերջնական կործանումէն և ոչ թէ միջակարգ և բարձր աստիճանի ուսումնասիրաներ, որոնք օգուտ պիտի տան ժողովուրդի ամենախիղքը մասին, և կամենում են այդ հարցը առաջադիւղ դուռայի: Այս լուրը ճշմարտ է, ուրեմն օրհնեալ լինի նրա մտածողը և երկոյս օրհնեալ լինի նրա կատարումն տուողը:

Որ մինն ասեմ, Նախիջևանի մէջ ոչ բարի բաղձանքի պակասութիւնը կայ, ոչ օգտաւոր գործի օգնութեան, ոչ ազգային իրէպի համակրութեան. մեր մէջ պակաս էր փոխադարձ սէրը և մէկմէկու խօսք հասկանալը. բայց նկատելի է, որ այս նորումս, աղնիւ երիտասարդութեան միջով, այդ բանն ևս հակադարձ յառաջ գնում է. այժմ մեր հիմունք ի ն ա տ ը (կամակորութիւն) իւր ոյժը կորուց. այժմ մենք պատրաստ ենք մեր ինտուէն հրաժարվել և մեր ընկերով ասածին համարել, եթէ այդ մեր ընկերով ասածը իւր մէջ ազգայնութեան սերմ ունի:

Նմանապէս նկատելի է, որ այս վերջին ժամանակներս, թէ գիւնեբուրք (քէֆ), թէ պիւլիսութիւն թէ թուլթի խաղերը սաստիկ թուլացել են մեր ժողովուրդի մէջ: Այժմ Նախիջևանցի լաւագոյն մասը կը ժողովուրդի սեղանի չորս կողմը (բայց ոչ այն անպիտան կանանչ սեղանի), համարում չայր առջնները դրած և ամբողջ ժամանակ կը խօսի քաղաքի պիտոյքի և նրանց էացնելու մասին:

Բայց առաւել նկատելի այն է, որ այդ լաւ բաները խորհող, յղացող և նոյա կատարումն տուող են ոչ համալսարանների և ոչ միջնակարգ վարժարանների մէջ դաստիարակուած և կրթուած մարդիկ, ոչ այլ իրանց բնածին ինկլինով և անգուր աշխուժով յառաջացած տղա-մարդիկ և երիտասարդներ: Իսկ ուսեանք ինչ անում են, կը հարցնէ թերեւ կարգադրող: Այս, ուսեանք ուրիշ և վեճ գործով են զբաղուած: Նորա քիւրի տակէն ծիծաղում են այս միջկուններու աշխատանքին և իրանք փողի ետեւ են, փողի ետեւ են և դարձեալ փողի ետեւ են: Ի հարկ է, խօսքս ոչ ամենի, այլ ուսեանքի մեծամասնութեան վրա է:

Սիրելի նախիջևանցիք, եթէ դուք ինչպէս որ լաւ սկսել էք, այնպէս էլ լաւ շարունակէք, նայեցէք ձեզ մէկ անհամ խօսք կամք ձեր խոնարհ ծառայ:

Սիրելի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «սեպտեմբերի 24-ին, 26-ին և 28-ին մեր քաղաքով անցան Աստուրիանի առաջին, երկրորդ և երրորդ հե-

ծելագոր գունդերը: Զօրքերը գնացին Կերբենդ, իսկ այնտեղից պէտք է չորհանաւով իրանց բնակութեան տեղերը ուղևորվին: Առաջ դարին ծախվում էր 25—30 կ. պուղը գորգերի անց-ներուց յետոյ դարու գինը բարձրացաւ մինչև 50 կ. »

Մթերքները ՂՈՒՐԱՅԻՑ հետեւեալ գնով ծախվում են. պանրի պուղը 3—3 ր. 50 կ., իւղի 7—7 ր. 50 կ., ոչխարի մսի ֆունտը 6 կ., տաւարինը 5 կ. »

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՅ, որ նոր գնացած ուսուցչական խումբը այնտեղ համակրութեամբ ընդունվել է:

Տպելով այս համարում մի նամակ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ, ընթերցողների ուղարկութիւնը հրաւիրում ենք նրա մէջ յիշված օգտաւոր հիմնարկութեան վրա, որ մտադիր են իրադրել ազգայնիք: Յայտնելով մեր խորին համակրութիւնը այդ գործին, մենք կը յայտնենք մեր կարծիքը ընկերութեան կանոնադրութիւնը ստանալուց յետոյ:

ԹԵԼԱԽԻՑ մեզ գրում են. «Որերումս թեւաւեցիներից մէկը տեսնում է աշակերտութիւնների միւրն զստատան դրան մօտ աղււսի վրա չորած «Այս ինչ խաբար է, միղք չեն օրորոյներ», հարցնում է նա: «Ոչինչ աղօթք են անում, որ մի հնարքով ազատվեն այնտեղից, պատասխանում է սրամիտ մղղսին: »

Դարե՛քից մեզ գրում են. «Այստեղ հրամայած է բոլոր հպատակներին զինաթափ լինել, ջէնք կրողներին բռնում են և սատակ պատժում: Այդ պատճառով քաղաքի մէջ յուզումն է տիրում: Խստութեամբ պատուիրած է կառավարութեանց, որ ոչ ոք ուսումը թողնալով ոչ աւանի և ոչ ծախի: Փոստատուները չեն ընդունում այդ թղթաւորամբ Ռուսաստան ուղարկելու համար: »

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆԸ

ԱՆԳԼԻԱ

Կերեւի հաստատ է այն լուրը, որ լորդ Բիկոնսթրիլը, չը նայելով իր հիւանդոտ դուրսութեանը դալ շարժի ներկայ կը գտնվի Կիլոյի խնջոյքին, ուր նա մտադիր է մի ձառ. կարգաւ Այս ձառին սպասում են մեծ հետաքրքրութեամբ, որովհետեւ յոյս ունեն, որ նա այդ ձառի մէջ ձեռք տեղեկութիւններ կը տայ այն քաղաքականութեան մասին, որին Անգլիան պէտք է հետեւի Արեւելքի և Աֆրիկայի վերաբերմամբ:

«Times» հրատարակում է լորդ Գրէյի հետեւեալ նամակը Աֆգանիստանի հարցի մասին: Նա ասում է, որ Անգլիայի կողմից մեծ անմոռութիւն և մեծ անարգարութիւն կլինէր պատերազմ չհրատարակել Աֆգանիստանի դէմ, որ այս մի ծանր, մեծածախս և ամենակորստաբեր հետեւանքներին հասցնող առաջարկութիւն է, և թէ սա մի դժուար վճիռ է պատասխանատուութեան ծանր տեսակետից նայելով: Նախ և առաջ Անգլիայի պարտականութիւնն է քննել իմանալ թէ ինչ կորստաբեր հետեւանքն կը հասցնէ Եւրոպէին թշնամական յարաբերութիւնները: Հնդկաստանի կայսրութեան վերաբերմամբ Անգլիան բարոյական ոչ մի իրաւունք չունի ստիպել Էմիրին պատգամաւոր ընդունելու: Ներքին մի անկախ իշխան է, նա նոյնչափ իրաւունք ունի մերժել օտարականներին իր հողի մէջ մտնել ինչքան և ամեն մի երկրի առաջնորդը:

Անգլիան իրաւունք չունի յարձակվելու նրա վրա, մինչև որ այդ չը վերաբերէր Անգլիայի պաշտպանվելուն, կամ Էմիրին պատժելուն, եթէ նա մի որ և է վնաս է հասցրել Մեծ Բրիտանիայի երաւունքներին: Այսու ամենայնիւ ծիծաղել բան կը լինէր կարծել թէ Ռուսաստանը կարող է իրել ձեռնկառնել միջին Ասիայի ծանապարհով: Նրան հարկ կը լինէր

փոխադրել անհուն քանակութիւն մարդոց այն ընդարձակ անապատների միջով, որոնք բաժանում են Օրէնթը և Հինդուստանը։ Նրան հարկ կը լինէր ծակել Աֆղանիստանի կերճերը, որոնք կազմում են մի տեսակ Զուլիգերիա։ Նրան հարկ կը լինէր մրցել մօտաւորապէս երկու հազար մղոն տարածութեան հետ։ Միթէ կարելի է կարծել, սառած է լորդ Գրէյ, որ Ռուսաստանը կարողանայ յաղթել այսպէս հսկայական դժուարութիւններին։

«Ուրիշապէս, երթաղբերք մինչև անգամ որ Ռուսաստանը ձեռնամուխ կը լինի այդ պատերազմին, այն ժամանակ Անգլիան ամիսներ կունենայ պաշտպանութեան պատրաստուելու և նրան երբեք մեծ դժուարութիւն չէր լինի ջարդել բոլոր թշնամու բանակները հէնց նրանց Աֆղանիստանի անցքերից դուրս եկած ժամանակ։

«Լորդ Գրէյ այն կարծիքի է, որ Մեծ-Բրիտանիան ոչ մի կերպով չը պէտք է զբաղվի նրանով թէ ինչ է կամենում անել Ռուսաստանը և ոչ էլ նրանով թէ ինչ զինուորներ կանի Աֆղանիստանը մինչդեռ Անգլիան բացարձակ երաւունք ունի, ինչպէս կը կամենայ, ամրացնել Հնդկաստանի արդի սահմանները։

ՅԲԱՆՍԻԱ

«Temps» լրագրից հոկտեմբերի 31-ից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները։

«Երեկ ամբողջ օրվայ միակ դործը աշակերտներն սենատորների երկրորդ նիստին էր։

«Արեւի երեքշաբթի օր այս սենատորները դարձեալ ժողովել էին երեք յարասե անդերի համար կանգնեցածները ընտրելու։ Ժողովը ոչ մի եզրակացութեան չը հասաւ և դործը յետաձգեցին մինչև հետեւեալ նիստը, որ պէտք է կայանար Վերայլում։

«Այս անգամ էլ ժողովը կայացաւ պ. դը Կերպրէի նախագահութեան ներքոյ, և առաջվայ պէս ոչինչ եզրակացութեան չը հասաւ, մի քանի արձակիւող սենատորներին ներկայ չը գտնուելու պատճառով, և այս նստում վճռեցին միայն, որ ստիպող նամակներ գրեն բոլոր բացակայ եղողներին, և որ ոչինչ վճիռ չը կայացնեն յարասե տեղերի կանգնեցածների մասին, մինչև որ բոլոր անդամներն էլ ներկայ չը լինին։

«Նախնայպէս վճռեց այս նստում, որ աշակերտներին երեք խմբերից իւրաքանչիւրը պէտք է ներկայացնէ իր կանգնեցածներին այդ երեք յարասե տեղերի մասին հետեւեալ ամբողջ ժողովում, որ կը կայանայ Վերայլում հետեւեալ երկուշաբթի օրը, և որի մէջ պէտք է որոշեն կանգնեցածների վճռական ցուցակը։

«Ժողովի մէջ երկու կուսակցութիւն են բաժանուել մի քանիսը կամենում են հաշտաւոր անձնաւորութիւններ ընտրել, որոնց վրա կարելի է յոյս կապել, որ յաղթող կը հանդիսանան հասարակագետականների դէմ։ Այս նպատակով ցոյց են տուել Ֆրեյզը, Եպիսկոպոսին, պ. դը Ֆալլուին և մի քանի սրանց նման անձնաւորութիւններին։ Մի քանիսն էլ ընդհակառակը ձգտում են ընտրել աւել աննշան անձնաւորութիւններ, այսինքն այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ոչ չունենան յետոյ վեճաբանութիւններ ու բաժանմունքներ ձգել աշակերտներին մէջ։ Գոնէ մինչև այժմ, այնպէս է երեւում, որ այս վերջին կուսակցութեան կարծիքը գերադաս է համարուում։

«Պ. Պ. դը Մօ և դը Մօնգօլֆիէ, որոնք Լուարի արձակիւող սենատորներն են, սաստիկ հետամուտ են այս երեք տեղերից միւր ստանալու։ Պատմում են, որ այս տեղերին հետամուտ են նոյնպէս պ. դը Լակոմբ, որ երբեմն Պիւլի-դը-Ռօմի կղերական կուսակցութեան պատգամաւոր էր և պ. Գոդէլլ, որ

երբեմն կասաղական ատենի «cour de cassation» գլխաւոր փաստաբան էր։

«Ձախակողման խմբին էլ իրանց կողմից անդործ չին մնում։ Նրանց կուսակցութիւնը երեկ գումարակցաւ Վերայլում, քննելու այն միջոցները, որով պրօպագանդ պէտք է տարածվի քուէարկութեան հրաւիրված գաւառների վրա, և դրանց նիստը կիսով չափ յաջողութեամբ պէտք է համարել։ Ժողովը ըզբաղվեց նոյնպէս հասարակագետական կանգնեցածների ընտրութեան մասին, բայց վճռապէս դեռ ոչինչ որոշված չէ։ Ընտրութիւնների սկզբնական յանձնաժողովի անդամներից տասնութէկը հանրապետականներ են, իսկ եօթը միայն աշակերտականներ։

ԱՄԵՐԻԿԱ

«Messager franco-américain» լրագրում կարդում ենք հետևեալ սարսափելի ու տխուր անցքը։

Մի երկաթուղու գնացք, որ Սիլվեր Լակէից գալիս էր Բօստօն 15,000-ից աւելի ճանապարհորդներով, յանկարծ դժից դուրս թռաւ։

Քսան և հինգ հօգի իսկոյն և եթ սպանվեցան։ Վերաւորվածների թիւը հարիւր յիսուհինգ աւելի էր։

Այդ օրվայ մէջ մի նաւամրցումի հանդէս է եղել այդ տեղ և այդ խուռն բաղմունքիւնը այդ հանդիպել էր վերադառնում։

Գնացքը բաղկացած էր տասն և իննը վագօններից, որոնց քաղում էին երկու մեքենաներ։

Մեքենավարը (machiniste), Գ. Վէստգատ, որ ողջ է մնացել՝ այսպէս է պատմում այդ անցքը։

Հէնց նոր էինք անցել Վալլաուտօնի կայանը, որ գտնուում է մօտաւորապէս եօթ մղոն հեռաւորութեամբ Բօստօնից, յանկարծ մեզ նից մի կէս մղոն հեռաւորութեամբ երեւաց ապրանքի մի վագօն, որը պատահամբ արձակվել էր մի ուրիշ գնացքից, և դա ընկած էր ուղիղ մեր ճանապարհի վրա։

Գ. Վեստգատ իսկոյն հրամայեց ոչնչացնել գոլորշին։ Բայց գնացքը գնում էր ժամը քսան մղոնի արագութեամբ, և չը նայելով բոլոր նրանց ջանքերին դադարեցնելու ընթացքը, այնուամենայնիւ նա գնաց և բոլոր իր ու ժով խփվեցաւ վագօնին։

Երկու մեքենաները գծերից դուրս թռան ու գլորվեցան ճանապարհի զառիվայրի վրա, վագօնները ջարդ ու փշուր եղան, նրանց կրտորները մէկ մէկու վրա դիզված՝ արհեստաւորութեամբ մանրի հետ խառը՝ մի սոսկալե տեսարան էին ներկայացնում։ Տեսարանը սարսափելի էր և ականատես վկաններ սրտաշարժ նկարագրութիւններ են անում։

Բաղդի անգլիութեամբ այս արդէտալի անցքի բեմը մի ամենավառագաւոր տեղ էր ընտրված։ 15 վայրկեան հեռաւորութեամբ ոչ մի տուն, ոչ մի խրճիթ, ոչ մի աղբիւր չէր երեւում, սակայն գնացքի ուղեկիցներից մէկը հեռագրական մի մեքենայ ունէր հետը, նա մագլցեց մի հեռագրական սիւնի վրա, կտրեց թելը, և հեռագիրը յայտնեց Բօստօնում այս բօթաբեր լուրը։

Գիտութիւնը միայն մի ժամ ու կէս վերջը հաղել կարողացան օգնութիւն հասնել այս ամբարշտներին։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԹԻԱՅԻՑ

Կ. Պօլիս 26 հոկտ. 78

Հոկտեմբեր 6-ի կարեօր նիստին վերջը Ադգային ժողովը չը գումարեցաւ։ Այդ նիստին մէջ Ս. Պատրիարքի ըրած խօսքին թուի թէ լուս տպագրութիւն չեն ըրած Բ. Գրան վրա, զի սեպտ. 14-ին Պատրիարքի անունի տարե-

գարծը լինելով կառավարութեան կողմէ պատճառաւոր մը չէ եկած ի նորհաւորութիւն, ինչպէս որ ամեն տարի սովորութիւն է, և «Մասիս» կը դիտէ թէ «Այս զանցաւորութիւնը անշուշտ մեղացութեան արդիւնք չէ»։

Ազգ. ժողովը քաղաքական ժողովոյ պակաս անդամաց թիւը լրացուցած, այժմ քաղաքական և կրօնական ժողովներն իրարու հետ համաձայն, բաւական լաւ կերպով կաշխատին և յուսաւք թէ իրենց պաշտօնավարութիւնը արդիւնաւոր լինի։

Ազգ. վարչութիւնը իւր ուշադրութիւնը մասնաւորապէս Հայաստանի առաջնորդաց վրա դարձուցեր է։ Ընտրի առաջնորդաց պէտքն զգալի է։

Մշտ Ս. Կարապետի վանուց վանահայր Մամբրէ եպիսկոպոսին առ կառավարութիւն քաջած հեռագիրն հաղորդած էի ձեզ. միաբանութիւնն արդէն վանահօր դէմ ամբաստանագիր մը մատուցեր էր Ազգ. վարչութեան. վարչութիւնը նկատողութեան առնելով սոյն ամբաստանագիրը Մամբրէ եպիսկոպոսը առ ժամանակեայ կերպով դադարեցուց վանահայրութենէ և քննիչներ կարգեց որպէս զի Մուշի մէջ քննեն այդ եպիսկոպոսի ընթացքն։ Մշտ վանքը եթէ ազգաւոր և բանիւրուն վանահայր մը ունենայ ազգին բաւական ծառայութիւններ պիտի մատուցանէ։ Սակայն Մամբրէ եպիսկոպոս ազգին դժգոհութեանը արժանացած է։

Քօզարի Ամէն-փաշա մահուան դատաւարատեցաւ, սակայն Սուլթանը այդ պատիժը աքսորի փոխեց։ Տեղւոյս անգլիական «Մեհենդը» թերթը կըսէ թէ «Չէյթուհի հայոց շարժումը չէ դադարած»։

Ասօր դարձեալ կը խրկեմ ձեզ հոկտեմբեր 21 և 23-ի ազգային թերթերու հրատարակած հարստահարութիւններն, զոր «Մշակի» մէջ անշուշտ կը հրատարակէ։ Չեմք կարծիք որ «Մշակի» ընթերցողը ձանձրոյթ զգան չարանակայսպիսի տխուր լուրեր լսելէ։ Գիտեմք որ նոքա և Ռուսաստանի բոլոր հայք մեծ վիշտ ունին իրենց եղբայր տառապանքներու համար և յուսամք թէ իրենց աշխատութիւններն կը միացնեն Պօլսի հայոց ջանքերու հետ այս չարեաց դարման տանելու համար։

Պօլսոյ հոկտեմ. 23-ի հայ և օտար թերթերն հրատարակեցին թէ կառավարութիւնը հեռագրեր է Ասիոյ կուսակալներուն որ եւրոպական Ցածկաստանէ Ասիա խրկուած չէրբէջներն անկարելի է այլ ևս երեւց առջի տեղը վերադարձնել, ուստի կուսակալներն թող աշխատեն որ չէրբէջներն վերջնական կերպով Ասիոյ մէջ տեղաւորին։ Թող ալ Հայաստանի բոլոր հայերն ուրախանան, աչքերնիս լոյս, բարեկարգութեանց սկզբնաւորութիւնն է։ Մեք արդէն զբոնուած քիւրդերու և չէրբէջներու դէմ կը բողոքէինք, մեզ նոր հիւրեր կը խրկեն։

Անգլիական բարեկարգութեանց ծրագրին հրատարակվելուն դեռ կը ապստեմք. սակայն Պօլսոյ թերթը մամուլը կըսէ թէ այդ բարեկարգութիւններն միայն երկու գաւառներու մէջ պիտի գործադրուին զի տէրութեան դրամական վիճակը չը ներք ամեն ուրեք ի գործ դնել։ Տեսնեմք Հայաստանի մէկ գաւառն ալ բողոք պիտի ունենայ մասն ունենալ։ Մեք չեմք դարմանաւ այս մասին, արդէն հաւատ չունէինք, և դժբաղդաբար կը տեսնեմք որ մեր կարծիքն ինչ կը վերկանան։

Հայաստանի տարաբաղդ վիճակին վրա դարձեալ Վահագն Կաթողիկոսի ուշադրութիւնը կը խնդրեմք։ Երբ Պօլսոյ կղերք, երիտասարդութիւնը, մամուլը, ամեն կարգի հայերը, եթէ Հայաստանի ժողովուրդը և առաջնորդներն, իրենց բողոքանայ ձայնը կը բարձրայնեն, Հայաստանեաց Հայրապետին աններելի է անտարբեր նստել։ Կրօնք թէ Վեհ. Հայրապետը չը հաւատար թէ այդպիսի բարբարոսութիւններ կրնան ի գործ գրուիլ։ Սակայն, կը հարցնեմք, ինչու տաճիկ կառավարութիւնը չէ կարող ըսել թէ հայք կը ստենան Վեհ. Կաթողիկոսի պարտքն է իր ժողովուրդի վիճակի վրա ստող տեղեկութիւն ունենալ, ինչ միջոցներու դիմած է Վահագն փառը այդ տեղեկութիւններն ստանալու համար։ Անշուշտ մէկ վստահելի և հաւատարիմ վարդապետ կամ եպիսկոպոս ունի թող խրկէ Հայաստան ի քննութիւն և վերջը եթէ կուզէ թող չը հաւատայ։

Այսօր թղթատարով ձեզ կը խրկեմ մի տեսք որով համար արդէն ձեզ գրած էի. սոյն տեսքն է «Թէ ինչ չանցանք Պէրլինի վեհաժողովն» գրեց Պ. Մինաս Չերալ, քարտուղար-թարգման հաւ պատգամաւորութեան յերոպա. այս տեղ

երեք օր առաջ հրատարակուեցաւ, և մեծ ընդունելութիւն գտաւ. գրեթէ սպառելու վրա է։

Հայկակ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական «Figaro» լրագրում կարդում ենք հետեւեալ հետաքրքիր լուրը. «Երեւի ընտանիքից մի երիտասարդ, պ. Ս., մի օտար դեսպանութեան պաշտօնեայ, բարեկամացել էր երկու տիկինների հետ, մօր և աղջկայ, որոնք բնակվում էին Էլիսեան դաշտերի (Champs-Élysées) հարևան փողոցներից մէկի մէջ։ Ինչպէս երևում է դրա յարաբերութիւնները այդ երկու տիկինների հետ հետզհետէ մօտեմական ձև են ընդունել, այնպէս որ երիտասարդը, որ արդէն մօր սիրականն էր, նոյնպէս և աղջկայ սիրականը դարձաւ։ Մայրը և աղջիկը իմանալով այդ բանը, մի սարսափելի բացատրութիւն ունեցան այդ մասին, որից յետոյ պ. Ս. մօռեց հեռանալ, այլ ևս չը վերադառնալու համար։ Վերջին սեպտեմբերի 12-ին նա բոլորովին զարմացաւ ստանալով տիկին X...-ից մի առնակ, որով տիկինը մի շատ ստիպեցողիչ խօսքերով խնդրում էր նրան գալ և ձայնել նրա հետ։ Նա զբոնաց այս հրաւերին և երկու տիկիններին գտաւ կատարելապէս հաշտված։ Խնջալք շատ ուրախ անցաւ, ինչպէս և երեկոյն, այնպէս որ Ս., փոխանակ տուն վերադառնալու, համաձայնվեց մնալ։ Բայց գիշերվայ մէկ ժամին մի զարհուրելի ցաւ սկսեց այրել նրա ստամոքսը, և սկսեց սարսափելի կերպով փախել։ Բոլորովին սարսափած՝ նա խնդրեց, որ իրան տեղափոխեն իր քրոջ մօտ, ուր տիկին X... նրան ուղեկցեց։ Երկու բժիկներ քննեցին նրան. երակը կամաց ու ծանր էր, չնչաւութիւնը նուազ։ Անհնազիտ որ տանջվող հիւանդը՝ իր որովայնի մէջ անհնարին ցաւեր էր գգում, տիկին X... չորս խնդրեց մնալ նրա մօտ, և չորս օր շարունակ նա չը հեռացաւ հիւանդի սնարից (chambre)։ 16-ին Ս. իրան աւելի վատ զգալով խնդրեց, որ միայն մնայ իր քրոջ հետ, և իր այս վերջին խօսակցութեան ժամանակ, նա, ինչպէս երևում է յայտնել է որ թունաւորված է։ Միւս օր նա մեռած էր։ Պ. Ս.-ի քրոջը և եղբայրը բողոք տուին այս մասին։ Դատաւարներ աշխատում է պարզել այս գաղտնիքը։

Մէրկուրում (Ֆրանսիայում) մի 50 ամառի-մէտր խորութեամբ ձիւն էր եղել, այնու ամենայնիւ ծառերի կանաչութիւնը մի նկարագրական հակառակութիւն էր կազմում ձիւնի հետ։

Գուէից գրում են լրագիրներին, որ այնտեղ առաջին անգամ շատ առատութեամբ ձիւն եկաւ, և թէ այդ ձիւնը առաջնորդված էր մի քանի օրվայ փոթորիկներով և յաճախ փայտակներով։ Իսկ դրանից յետոյ սաստիկ ցրտեր արին։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 6/18 նոյեմբերի։ Ղարաթէօ-դօրի-փաշան Կրիտ կղզու նահանգապետ է նշանակված։ Սուլթանը յանձնեց Միթհադ-փաշային մօցնել անգլիական ընթերցանքը Սիրիայում։

ՀԱՌՄ, 6/18 նոյեմբերի։ Թագաւորի կեանքին ձեռնամուխ եղողը յայտնվեցաւ որ կապիւր ունի միջադրային սօցիալիստական ընկերութեան հետ։

Ս. ՊԵՏԵՐՔՈՒԹԻ, 8 նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շըյանի արժէ 97 ռ. 12 Կ., երկրորդ 95 ռ. 62 Կ., երրորդ 95 ռ. 50 ռ., չորրորդ 95 ռ. 55 Կ., ներքին առաջին 5% փողատուութեան տոմսակը արժէ 347 ռ. 55 Կ., երկրորդ 229 ռ., արևելեան 92 ռ. 55 Կ., ոսկի 8 ռ. 37 Կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23,50 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 200 մարկ, 75 ֆլ. Գարիբի վրա 246 Ֆրանկ։ Տրամադրութիւնը տուեալ է, վերջը թուլանում է։

